

Համարը N 1431-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀ ՊՏ 2011.10.19/57(860)  
Հոդ.1461

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 29.10.2011

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործու  
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 22.09.2011  
Ստորագրման ամսաթիվը 12.10.2011  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ **Կապեր այլ փաստաթղթերի հետ**

[05.03.2002 ՀՕ-309 ՀՀ ՕՐԵՆՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ](#)

[27.11.2008 ՀՕ-198-Ն ՀՀ ՕՐԵՆՔԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ](#)

[15.04.2010 N 437-Ն ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐ...](#)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 սեպտեմբերի 2011 թվականի N 1431-Ն

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի և «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել քաղաքացիական պաշտպանության փրկարար ուժերի ստեղծման, պատրաստման և մշտական պատրաստվածության ապահովման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 437-Ն որոշման N 2 հավելվածի ցանկի երկրորդ կետով նախատեսված «Պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկայով և սարքավորումներով հագեցած ինժեներական, քիմիական, ճառագայթային պաշտպանության ստորաբաժանումների հիմնում և դրանց հետագա զարգացման ապահովում» միջոցառման իրականացման ընթացքում ղեկավարվել սույն որոշման 1-ին կետով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2011 թ. հոկտեմբերի 12  
Երևան

## Կ Ա Ր Գ

### **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են քաղաքացիական պաշտպանության փրկարար ուժերի (այսուհետ՝ ՔՊ-ի փրկարար ուժեր) ստեղծման, պատրաստման և մշտական պատրաստվածության ապահովման գործընթացները:

2. Քաղաքացիական պաշտպանության ուժերի տեսակները սահմանված են «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով:

#### **II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ**

3. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներն ստեղծվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի կազմում, համարվում են մշտական պատրաստության զինվորական ստորաբաժանումներ, որոնց համալրման, նախապատրաստման, մարտական կիրառման կարգը, իրավասությունը և կազմակերպական հիմքերն ու գործունեության սկզբունքները կանոնակարգվում են «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներն անհրաժեշտության դեպքում ստեղծվում են համայնքներում, կազմակերպություններում, որոնց ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 1532-Ն որոշմամբ:

5. ՔՊ-ի փրկարար ուժերն ստեղծվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարարական ծառայության ընդհանուր թվի սահմաններում: ՔՊ-ի փրկարար ուժերի ստորաբաժանումների տեղակայման վայրերը, կազմը և կառուցվածքը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

#### **III. ՔՊ-Ի ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

6. ՔՊ-ի փրկարար ուժերը համապատասխան տեխնիկայով և սարքավորումներով հագեցած մասնագիտացված հատուկ ստորաբաժանումներ են, որոնք նախատեսված են պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում բնակչության ու նյութական արժեքների պաշտպանության համար:

7. ՔՊ-ի փրկարար ուժերի խնդիրներն են՝

1) ռազմական գործողությունների կամ արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած խոցման օջախներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը:

2) մասնակցությունը վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման և տուժած բնակչության կենսաապահովման իրականացման աշխատանքներին:

3) մասնակցությունը պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների և ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներին:

4) քաղաքացիական պաշտպանության ուժերի՝ ռազմական գործողությունների կամ արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած խոցման օջախներ մուտքի ապահովումը:

5) մասնակցությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

8. ՔՊ-ի փրկարար ուժերի գործառույթներն են՝

1) մասնակցությունը ռազմական դրության ժամանակ և արտակարգ իրավիճակներում

ճառագայթային, քիմիական ու կենսաբանական վարակվածության տարածքներում հետախուզության և սահմանազատման իրականացմանը, վարակված օջախների շրջափակմանը.

2) մասնակցությունը ճառագայթային, քիմիական ու կենսաբանական վարակվածության օջախներում հատուկ և սանիտարական մշակման միջոցառումների իրականացմանը.

3) մասնակցությունը վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ բնակչության տարահանման, տեղաբաշխման և տուժած բնակչության կենսաապահովման իրականացման աշխատանքներին.

4) քաղաքացիական պաշտպանության ուժերի՝ խոցման օջախներ մուտքի և տարահանման երթուղիներում ճանապարհների անցանելիության ապահովումը.

5) փլատակների մաքրման կամ փլվածքների հարթեցման միջոցով անցուղիների հարմարեցումը, անցումների բացումը և վթարային կառույցների անվնաս փլուզումը.

6) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանության կառավարման մարմինների և ուժերի միջև հուսալի ու անխափան կապի ապահովմանը.

7) պայթուցիկ (պայթյունավտանգ) առարկաների և նյութերի հայտնաբերումն ու վնասազերծումը՝ արտակարգ իրավիճակների պայմաններում.

8) ականապատ տարածքների հայտնաբերումը, արգելանշանների տեղադրումը, ականազերծման աշխատանքների և տարածքների հսկողության կազմակերպումը՝ պատերազմի կամ ռազմական դրության պայմաններում.

9) մասնակցությունը տուժածներին առաջին բուժօգնության ցուցաբերման, տեսակավորման և բժշկական հիմնարկներ տեղափոխման աշխատանքներին.

10) մասնակցությունը մարդասիրական օգնության բեռների ստացման, պահպանման և բաշխման գործընթացներին.

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

#### **IV. ՔՊ-Ի ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

9. ՔՊ-ի փրկարար ուժերի ստորաբաժանումների գործունեության հիմնական սկզբունքները, պատրաստման և մշտական պատրաստվածության ապահովման կարգը, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին մասնակցող փրկարարների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական և սոցիալական երաշխիքները, նյութական ապահովության հիմքերը և ծառայության հետ կապված այլ առանձնահատկություններն ու հիմնական հարաբերությունները կարգավորվում են «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ու «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և նշված օրենքներից բխող այլ իրավական ակտերով:

10. ՔՊ-ի փրկարար ուժերի ստորաբաժանումների պատրաստվածության վիճակն ստուգվում է քաղաքացիական պաշտպանության համալիր և հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացման միջոցով:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**